

Դարձեալ, Յովհաննէս առաքեալն է որ ճշգրտօրէն նշանակած է վայրը, ուր կը գտնուի Յակոբ Նահապետին ջրհորը⁷¹ :

Զորորորդ Աւետարանիչին ականատես վկայ մը ըլլալը փաստելու համար, A. Feuillet կ'ընէ հետեւեալ նուրբ անդրադարձութիւնը «Զորորորդ Աւետարանի հեղինակը, ինքզինք չատ անկախ ցոյց կու տայ համարաբառ երեք աւետարաններէն, եւ չի վախնար, հարկի պարագային, անոնց հակասելու երեւոյթ ունենալ: Եւ սակայն, երբեմն, զարմանալի կերպով անոնց կը միանայ, որ չի կրնար երբեք հաշիւի մը արդիւնք ըլլալ. այսպէս Պետրոսի հակազդեցութիւնը ի տես Յիսուսի խոնարհեցումներուն, (հմտ. Յովհ. ԺԳ. 8 եւ Մարկ. Ը. 32), Մարթայի եւ Մարիամի իւրայայտուկ նկարագիրները (հմտ. Յովհ. ԺԱ. եւ Ղուկաս Ժ. 38—42): Բոլոր այս երեւոյթները լաւագոյնս կը բացատրուին եթէ անիկա ականատես վկայ մը ենթադրութիւն»⁷²:

(ဇယား - ၉)

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - ՈՐԿԱՆԻԶԱՐԱՆՆԵՐ

ՄԻԶՍԶԳԿԱՅԻՆ Ա. ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

(ՊԵՐԿԱՄՈՑ, 28-30 ՅՈՒՆԻՍ 1975)

Հայադիտական ուսումնասիրութիւններու մարդին մէջ կարեւոր ներդրում մը նշանակեց Միջնադարեան Հայ արուեստի մասին Միջնադարեան Ա. Գիտաժողովը, որ տեղի ունեցաւ Հիւսիսային Իտալիոյ Պերկամոյ քաղաքին մէջ՝ Յունիս 28-30ի օրերուն:

[illegible]

71. Өмүс. 7. 6, 12:

72. Nouveau Testament, Introduction à la Bible II, 3^e Edition, 42 657:

1. Մեր «Հայ Ընտանիք» ամսագրերը ընդարձակ ու համադրական վերլուծումով, մեջ արձագանգ հանդիսացաւ այս կարեւոր ու նշանակալից եղելութեան (1975, թ. 9-10, էջ 6-11):

հսկողութեան մը ենթարկուած են տեղական իշխանութիւններուն կողմէ:

Ռոսիկինեան մանրանկարչութեան նոր մերձեցում մը կը յայտնաբերէր Միլանոյէն Դոկտ. Զասթրովի զեկոյցը՝ «Ստեղծագործ ինքնավարութիւնը եւ սահմանները Թորոս Ռոսիկինի մանրանկարչութեան մէջ» խորագրով: Զեկուցողը՝ երկու եւ մինչեւ իսկ երեք ձեռք կը զանազանէր Ռոսիկինի վերագրուած մանրանկարներուն մէջ՝ թէեւ իրարու ժամանակակից եւ միեւնոյն դպրոցին պատկանող: Կ'ենթադրէր թէ անոնք կրնային ըլլալ նոյնինքն Ռոսիկինի անմիջական աշակերտները՝ ոչ նուազ հանճարեղ քան վարպետը:

Ուշագրաւ էր նմանապէս արուեստի երիտասարդ պատմաբան Ճ. Ննիի զեկոյցը հայ ճարտարապետութեան մէջ մանրակերտներու դերին եւ նշանակութեան մասին. համեմատաբար նոր եւ քիչ ուսումնասիրուած բնանիւթ մը:

Մասնաւոր հետաքրքրութեան կ'արժանանային իրենց չօշափած նիւթերով՝ առհասարակ հայ եւ օտար մշակութային փոխյարաբերութիւններու վերաբերեալ զեկուցումները. նմանապէս զեկոյցները՝ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի պատուիրակութեան անդամներուն, որոնք արդէն իսկ հեղինակութիւններ իրենց չօշափած բնագաւառներուն մէջ՝ կը ներկայացնէին անհատական կամ խմբական մանրակերտ աշխատանքներու համադրութիւն մը:

Նիւթին այժմէականութեամբ եւ միանգամայն պատմական կարեւորութեամբ յիշատակութեան արժանի է նաեւ Ճարտ. Հերման Վահրամեանի զեկոյցը, որով հակիրճ տեղեկութիւն մը տուաւ կատարած համբերատար աշխատանքին նկատմամբ՝ պատմական Հայաստանի վանքերուն ներկայ վիճակին շուրջ՝ քաղելով պատմական ու տեղագրական ուսումնասիրութիւններէ, ինչպէս նաեւ հին եւ նոր ուղեւորներու յուշագրութիւններէն ու տեղեկատուութիւններէն:

Կը կարծենք թէ չափազանցութիւն պիտի չըլլար աւելցնել թէ գրեթէ բոլոր զեկոյցները կը պարունակէին հետաքրքրութեան արժանի տարր մը. ինչ որ եւս աւելի բաղձալի կը դարձնէ Գիտաժողովի գործերուն վաղընդփոխ հրատարակութիւնը:

Կը խորհնք թէ, իր ընդհանրութեան մէջ նկատուած, Գիտաժողովը կրցաւ հասնիլ այն նպատակին՝ զոր բացման խօսքին մէջ կը բանաձեւէր Գիտաժողովի Կազմակերպութեան Ընդհ. Քարտուղար եւ Միլանոյի Հայ Ճարտարապետութեան Ուսումնասիրութիւններու Ղեկավար՝ Փրոֆ. Ատրիանոյ Ալփակոյ-Նովելլոյ. այն է՝ գեղարուեստական կոթողներու աւելի այժմէական ընթերցում մը, որ գերազանցելով սոսկ ձեւական կամ ժամանակագրական վերլուծումը, վերադառնէ անոնց ներքին բովանդակութիւնը եւ կեանքի ու շրջապատի հետ աւելցնելները:

Գիտաժողովին զուգընթաց Պերկամոյի մէջ տեղի ունեցան նաեւ երկու ցուցահանդէսներ, գործակցութեամբ՝ Միլանոյի Հայ Մշակութային Միութեան եւ Հայ Ճարտարապետութեան Ուսումնասիրութեան Կեդրոնին: Ցուցահանդէսներէն մին նուիրուած էր Հայ Ճարտարապետութեան, իսկ միւսը՝ Միջնադարեան Հայ Արուեստին, յատկապէս՝ Ջեռնարուեստներուն: Գիտաժողովին քանի մը օր առաջ տեղի ունեցած էր նաեւ բացում Հայ մշակութային շաբաթի մը՝ նպատակ ունենալով ծանօթացնել Հայ ժողովուրդը իր պատմութեամբ, մշակոյթով ու քաղաքակրթութեամբ՝ Գիտաժողովը հիւրընկալող Պերկամոյի ժողովուրդին:

Նպատակէ դուրս պիտի չըլլայ դուցէ վերահիշել այստեղ այն գլխաւոր առաջարկները՝ որ բանաձեւուեցան Գիտաժողովին՝ Մ. Ղազարի մէջ կայացած եզրափակիչ հաւաքոյթի ընթացքին.

Ա. Պահպանել եւ քաջալերել՝ զանազան Կեդրոններու միջեւ Հայագիտական ուսումնասիրութիւններու վիճակին վերաբերեալ փոխադարձ ամէն կարելի հաղորդակցութիւն:

Բ. Օգտագործել այս նպատակին համար հաղորդակցութեան բոլոր հնարաւոր ճամբաները, յատկապէս՝ մամուլը եւ տեսալսողական միջոցները:

Գ. Աշխատիլ՝ որպէսզի այս կարգի հետազոտութիւնները եւ ուսումնասիրութիւնները չկաշկանդուին ու չխափանուին անիմաստ կերպով՝ քաղաքական կամ աշխարհագրական բնոյթ կրող պատուարներէ եւ արգելքներէ:

Դ. Կրթական, բարեսիրական բոլոր Կազմակերպութիւնները, Հաստատութիւնները եւ Հասարակութիւնները յանձնառու ըլլան՝ աւելցնել կերպով թիկունք կանգնելու եւ նպաստելու այս կարգի աշխատանքներուն եւ պրպտումներուն: Մասնաւորապէս կ'առաջարկուի՝ Երեւոր Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու մէջ ալ կազմուին՝ Երեւոր Լանի մէջ արդէն գոյութիւն ունեցող եւ գործող Կեդրոնին կողքին՝ վաւերագրումի եւ համակարգութեան կեդրոններ:

Ե. Հայ Արուեստի եւ Ճարտարապետութեան վերաբերեալ նման Միջազգային Հաւաքոյթներ կրկնուին պարբերաբար, ամէն չորս տարին անգամ մը, մինչ տեղական ու մասնական մակարդակի վրայ տեղի ունենան աւելի յաճախակի հանդիպումներ:

Պերկամոյի Գիտաժողովը, որ գործնականօրէն ցոյց տուաւ թէ այս փափաքներէն շատեր արդէն իսկ մտած են գործադրութեան ուղիին մէջ, կը ներկայացնէ, ուրեմն, նշանակալից հանգրուան մը Հայ Մշակոյթի ուսումնասիրութեան եւ ծաւալումի գործին մէջ. կը մնայ Միջազգային Կազմակերպութեան ծրագրուած եւ համեմատաբար գործակցութեամբ մը:

Մեր ամենաջերմ ու խանդավառ շնորհակալությունները թող երթան բոլոր անոնց՝ որոնք ունեցան իրենց դերը եւ մասնակցութիւնը Գիտաժողովի կազմակերպութեան դժուարին դրժին մէջ, ինչպէս նաեւ բոլոր անոնց՝ որոնք իրենց մասնակցութեամբ աւելցուցին փայլը Գիտաժողովի նիստերուն:

Ստորեւ կը ներկայացնենք ցանկը՝ Գիտաժողովին ներկայացուած բոլոր զեկուցումներուն՝ վերոյիշեալ դիտաւոր վեց խումբերու դասակարգութեամբ:

Ա. — ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

Դոկտ. Ճարտ. Ճ. ԵՆԻ (Թորինոյ, Ճարտարապետութեան Պատմութեան Հաստ.), Միջնադարեան արուեստին մէջ մարտարապետական առարկային ներկայացումը՝ մասնաւոր նկատողութեամբ կովկասեան մարտարապետութեան մանրակերտներուն:

Փրոֆ. Հ. ԹԻՐՇ (Միւնխէն, Գիտարուեստի Համալս.), Հայաստանի մարտարապետութեան պատմութեան մասին նկատողութիւններ:

Փրոֆ. Փ. ՎԵՐԾՈՆԷ (Թորինոյ, Ճարտարապետութեան Պատմութեան Հաստ.), Հայաստան՝ ԺԹ. դարու երկու իտալացի ուղեւորներու յուշագրութիւններուն մէջ:

Փրոֆ. Հ. ՔԱԼԱՅԵԱՆ (Պէյրուս, Ամերիկեան Համալս.), Համեմատութիւնը եւ համաչափութիւնը՝ հայ մարտարապետութեան մէջ:

Բ. — ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փրոֆ. Բ. ԱՌԱՔԵԼԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Երեւան), Խճանկարի արուեստը հայկական վաղ ֆրեսկոնկարական շրջանին:

Փրոֆ. Կ. ՂԱՖԱԴԱՐԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Արգիշտիի խմբի — Երեւան), Արմաւիր քաղաքին մարտարապետութիւնը:

Փրոֆ. Մ. ՇԱՀԻՆ (Լոնտոն), Ուրարտական բրոնզներ:

Փրոֆ. Ք. ՏՈՆԺՈՆ (Փարիզ), Հայաստանի դերը Անդր-կովկասի մէջ Միջին Պղինձէ շրջանին (Ք. Ա. Բ. հազարամեակի Ա. կէսը):

Դոկտ. Վ. ՔԱԼԱՅԵԱՆ (Թեհրան, Հնախօս. Հաստ.), Պասքամ եւ Ուրարտուի Արեւելքը:

Գ. — ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Փրոֆ. Ա. ԵԱՔՈՊՍՈՆ (Լենինկրատ), Իրար խաչածեղ կամարները հայ միջնադարեան մարտարապետութեան մէջ:

Դոկտ. Ճարտ. Ա. ԶԱՐԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Երեւան), Բագարան եւ Բագարանատիպ եկեղեցիները:

Փրոֆ. Ժ. Մ. ԹԻՆԵՐԻ (Էթամփ), Արծուարերի Ս. Աստուածածին եկեղեցին (Է. դար). Ս. Հռիփսիմէի տիպով յուշարձան մը վասպուրականի մէջ:

Փրոֆ. Ն. ԹՈՔԱՐՍԻ (ՍՍՀՄ ԳԱ, Լենինկրատ), Իշխանի կաթողիկէին մարտարապետութեան պատմութիւնը:

Փրոֆ. Յ. ԽԱԼՓԱՆՉԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Մոսկովա), Միջին Դարու հայ աշխարհիկ մարտարապետութիւնը:

Փրոֆ. Մ. ՀԱՍՐԱԹԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Երեւան), Միանա եւ արտաքին արախով վաղ ֆրեսկոնկարական հայկական քաղիկականները:

Փրոֆ. Մ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Երեւան), Միջնադարեան Հայաստանի վանական համալիրները:

Դոկտ. Ճարտ. Մ. ՊՐԱՄՊԻԼԼԱ, ԻՍՄԷՕ (Հոմ), Հայ գիւղական տուններու կառուցութիւնը:

Դոկտ. Ճարտ. Թ. ՊՐԷՉԻԱ (Հոմ), Լիմի, Կտուցի, Առտէրի անապատները՝ վանի լիւնին մէջ:

Փրոֆ. Ա. ՍԱՀԻՆԵԱՆ (ՀՍՍՀ ԳԱ, Երեւան), վաղ ֆրեսկոնկարական շրջանի Հայաստանի եռանա եկեղեցիները: ՆՈՅՆ, Գառնիի տաճարին հին տաճարը:

Դոկտ. Ճարտ. Հ. ՎԱՀՐԱՄԵԱՆ (Միւնխէն), Հայաստանի միջնադարեան վանքերու առկայութիւնը:

Դոկտ. Ճարտ. Յ. ԳԱԶԱՆՉԵԱՆ (Միւնխէն), նպաստ մը Զուարթնոցի հարցին լուծման:

Փրոֆ. Փ. ՔՈՒՆԷՆՈՅ (Ռէճիոյ Քալապրիա, Ճարտարապետութեան Մասնաճիւղ), Միջին Դարու հայ շրջանային դպրոցները:

Դ. — ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐԵՒՄՈՒՏԻ ԵՒ ԱՐԵՒԵԼՔԻ

Փրոֆ. Կ. ԵՈՆԷՍԻՐԻ (Պուլքէշ, Ճարտարապետութեան Հաստ.), Գեղարուեստական առընչութիւններ, յատկապէս մարտարապետութեան մէջ, Ռումանիոյ եւ Հայաստանի միջեւ:

Փրոֆ. Մ. ՄԱՐԻԱՆԻ ՔԱԼՈՅ (Պարիի Համալս., Արուեստի Պատմութեան Հաստ.), Գեղարուեստական առընչութիւններ Միջին Դարուն՝ փոլիական շրջանին եւ կովկասեան քաղաքակրթութիւններուն միջեւ:

Դոկտ. Կ. ՄԻՆՈՒՆԵՆՈՅ (Պարիի Համալս.), Մեղանցի Ս. Լաւրենտիոսի եռակոնքը:

Փրոֆ. ֆ. ՄԻՈՎԻԶ (*Պեղկրատ, Հնախօս. Հաստ.*), Գեղարուեստական կապեր Միջին Դարում՝ Հայաստանի, Վրաստանի եւ Եւրոպայական իշխանութիւններում միջեւ:

Փրոֆ. Ն. ԶԱՆԵԻՍ ՏԵՉԵԻՍՔԱՆ (*Պուլկարիոյ ԳԱ, Սոֆիա*), Պուլկարիոյ միջնադարեան սրբազան մարտարապետութեան վերաբերեալ ֆանի մը հարցեր՝ Հայաստանի հետ առնչութիւններում նկատառութեամբ:

Փրոֆ. Ժ. ՊԱՆՔՈՅ (*Պրիւքսէլի Համալս.*), Ճակատի մանրաֆանդակները Վլատիմիր-Սուզուալի, Հայաստանի եւ Վրաստանի արուեստին մէջ. աւելի տարբերութիւններ՝ ֆան մանուկներ:

Ճարտ. Ս. ՊՈՅԱՆՅԱՆ (*Սոֆիա*), Հայկական ազդեցութիւններ Պրեսլաւի բուրգաւոր եկեղեցիին մարտարապետութեան մէջ:

Փրոֆ. Ճ. ՊՈՔՔԱՆԻ (*Վենետիկի Համալս., Պարսկազգիտութիւն*), Հայ մշակոյթին վրայ պարսկական կրօնի ազդեցութիւնները:

Փրոֆ. Ճ. ՌՈՔՔԻ (*Միլանոյ*), Վաղ-միջնադարեան հայ մարտարապետութեան ծագումին վերաբերեալ հարցեր. համեմատութիւն մը՝ միջնադարեան լուսարտական մարտարապետութեան հետ:

Դոկտ. Մ. Ճ. ՍԱՆՏՐԻ (*Միլանոյի Բազմարուեստից Մարդկայնապաշտական Նիւթերու Հաստ.*), Թուրքիոյ Սելիմաֆեաններում պետական արուեստը եւ Հայ արուեստին հետ առնչութիւնները:

Փրոֆ. Ե. Ս. ՆԱՆՈՒ (*Տիբերեան Ակադ., Պուլքէշ*), Հայ-Ռումանական առնչութիւններ Գուրգուս տէ Արմէշի եկեղեցիին մարտարապետութեան մէջ:

Դոկտ. Լ. ՍԵՄԵՐԱՐԻ (*Պարիի Համալս.*), Պիշէլիայի դաշտագետներին մէջ «Սանթա Մարիա տի Ճանոյ» եկեղեցին:

Դոկտ. Է. ՎԵՆԵՏԻ (*Պարիի Համալս.*), Փագանոյի դաշտագետներին մէջ Սեփիաննիայալէ կրօնաւոր ազգայնի եկեղեցին:

Փրոֆ. Ք. ՓԵՐՈՒԱՆԼԻ (*Միլանոյի Բազմարուեստից Մարդկայնապաշտական Նիւթերու Հաստ.*), Վիզիգոթեան եւ Աստուրեան մարտարապետութիւն. արեւմտեան հանդիպակէտ մը՝ Հայկական մարտարապետութեան:

Դոկտ. Ա. ՓԵՓԷ (*Պարիի Համալս.*), Մոտումնոյի մօտ՝ Պալսինեանոյի «Սան Ֆելիչէ» (Սան Փիեթրոյ) եկեղեցին:

Ե. — ՀԱՅ-ԻՏԱԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դոկտ. Հ. Լ. ԶԵՔԻՆ (*Վենետիկ, Միլիթարեան Միաբանութիւն*), Միջին Դարում իտալիոյ Հայ գաղութները եւ Հայ-իտալ մշակութային կապերը:

Դոկտ. Ճարտ. Ա. ՍՔՈՒԱՐԻ (*Թորինոյ, Ճարտարապետութեան Պատմութեան Հաստ.*), Ճենովայի մէջ Հայերու Ս. Բարթոլիմէոս եկեղեցին:

Փրոֆ. Տ. ՏԷ ՊԵՆՆԱՐՏԻ ՖԵՐՐԵՐՈՅ (*Թորինոյ, Ճարտարապետութեան Պատմութեան Հաստ.*), Քազալէ Մոնֆերրաթոյի մէջ Ս. Եւասիսի գաւիթը եւ իրար խաչածեղ կամարները:

Փրոֆ. Ք. ՖՈՆՍԷՔԱ (*Լէչչէի Համալս.*), Հարաւային իտալիոյ Հայերում միջեւ:

Զ. — ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏՆԵՐ

Փրոֆ. Տ. ԳՈՒՅՄՃԵԱՆ (*Պէյրուի Ամերիկեան Համալս.*), Հայկական Պենտեկոստէի սրբանկարչութեան մէջ կենդանակերպ պատկերացումները հարցը:

Փրոֆ. Ն. ԹԻԵՐԻ (*Էթամփ*), Պենտեկոստէի Պաղեստինեան սրբանկարչութեան գոյատեւումը Վասպուրականի մէջ:

Փրոֆ. Թ. ԻՍՄԱԵԼԻՈՎԱ (*Էթամփ, Լենինկրատ*), ԺԱ. դարու հայ մանրանկարները (դպրոցներ):

Փրոֆ. Տ. ԼԱՆԿ (*Լոնտոնի Համալս.*), Հայաստանի եւ Վրաստանի դրամական արուեստը:

Դոկտ. Հ. ԽԱՆՏԱՆԵԱՆ (*Փարիզ*), Սիրեմա-թոշունի բնանկարը հայ ձեռագիրներում մանրանկարչութեան մէջ:

Դոկտ. Ճ. ՇԱՆՏԷՐ, ԻՍՄԷՅՈ (*Ճենովայի Ճարտարապետութեան Մասնաճիւղ*), Երուսաղէմը՝ Նոր-Ջուղայի քիչ ծանօթ հայկական նշանակալի մը մէջ:

Դոկտ. Օ. ՇԱՍԹՐՈՎ (*Միլանոյ*), Ստեփանոս ինքնավարութիւնը եւ սահմանները Թորոս Ռոսիինի մանրանկարչութեան մէջ:

Դոկտ. Կ. ՌԻՆՈՒՆԻՆԵԱՆ (*Պոլոնիայի Համալս.*), Փարմայի եւ Պալմիայի մատենադարաններում հայկական հաւաքածոները:

Փրոֆ. Ռ. ՇԹԻՆԷԼ (*Հոռմ, Հերձեան գրադարան*), 1038 թուականի Հայկական Քառաստարանի մը մէջ Քրիստոսի Այլակերպութեան մանրանկարը:

Փրոֆ. Ն. ՍՏԵՓԱՆԵԱՆ (*ՀՍՍՀ ԳԱ, Երեւան*), Հայկական փոքր արուեստները Միջին Դարում:

Փրոֆ. Ս. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ (*Փարիզ*), Քանի մը անդրադարձութիւններ հայկական մանրանկարչութեան մասին: